ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ
Ժ.01.05 «ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. «Բանահյուսություն» առարկան և նրա անվանումները:
2. Առասպել և առասպելաբանություն)էական հատկանիշները):
3. «Վիպասանք» առասպելաբանական վեպը (աղբյուրները, կառուցվածքը, բովանդակությունը, կերպարները):
4. Բանահյուսության հիմնական հատկանիշները:
5. «Պարսից պատերազմ» միջնադարյան վեպը (աղբյուրները, կառուցվածքը, բովանդակությունը, կերպարները):
6. «Սասնա ծռերի» կառուցվածքը, վիպական-գեղարվեստական հատկանիշները:
7. Բանահյուսության սեռերն ու տեսակները (ժանրերը):
8. «Տարոնի պատերազմ» միջնադարյան վեպը (աղբյուրները, կառուցվածքը, բովանդակությունը, կերպարները):
9. Հայկական ժողովրդական ավանդույթները (ընդհանուր բնութագիր):
10. Բանահյուսության փոխակերպման հիմնական գործոնները:
11. «Սասնա ծռերի» առասպելաբանական ու պատմական հիմքերը:
12. Հրաշապատում հեքիաթներ:
13. Բանահյուսության կապն ու փոխազդեցություններն ազգային մշակույթի այլ բնագավառների հետ (ազգագրություն, գրականություն, պատմություն, կերպարվեստ):
14. Հայ վիպական երգերը (Լևոնի երգը, «Նարեկացի», Կարոս խաչ, Ասլան աղա, Մոկաց Միրզա), վիպական հատկանիշները և պատմական հիմքերը:
15. Հայ հմայական բանահյուսությունը (անեծք, օրհնանք, երդում, աղոթք):
16. Բանագիտության սկզբնավորումը ընդհանուր և հայ մշակույթի պատմության մեջ:
17. Իրապատում հեքիաթներ:
18. Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելը:
19. Բանագիտական դպրոցները (ընդհանուր բնութագիր):
20. Կենդանական հեքիաթներ ու առակներ:
21. Վահագնի առասպելը:
22. Առասպելաբանական դպրոցը (Գրիմ եղբայրներ):
23. Հայկական առածներ ու ասացվածքներ (ընդհանուր բնութագիրը):
24. Հայ ժողովրդական երգերի հիմնատիպերն ու հատկանիշները (հայերեններ, խաղիկներ):
25. Փոխառությունների դպրոցը (Թեոդոր Բենֆեյ):
26. Հայկական հանելուկները (ժանրային-կառուցվածքային բնութագիր):
27. Հայ ժողովրդական երգերի թեմատիկ խմբերը (ծիսական, մանկական և օրորոցային, աշխատանքային, ռազմի և զինվորի, սիրո և կենցաղային):
28. Անգլիական մարդաբանական դպրոցը (Էդ Թայլոր):
29. Հայ հին առասպելները (ընդհանուր բնութագիր, սկզբունքներ):
30. Հայկական ծիսերգերը (տոնական, հարսանիքի, մահվան և սգո):
31. Ֆիննական պատմա-աշխարհագրական դպրոցը:
32. Հայկի և Բելի առասպելը:
33. Գ.Սրվանձտյանցի բանագիտական գործունեությունը:

34. Հայ վիպական բանահյուսության և պատմատիպաբանական զարգացման պարբերաշրջանները:
35. Արտավազդի և Միհրի առասպելները:
36. Ժողովրդական խաղիկների կառուցվածքն ու հորինվածքը:
37. «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի գրառումների և հրատարակությունների պատմությունը:
38. Մ.Աբեղյանի բանագիտական վաստակը:
39. Հայ հմայական աղոթքներ, ժանրային-տիպաբանական բնութագիր:
40. Հայ ժողովրդական հեքիաթների հիմնախմբերը:
41. Ա.Ղանալանյանի բանագիտական գործունեությունը:
42. Դավթի կերպարը «Սասնա ծռերում». բնավորության հիմնական գծերը:
43. Հայ բանագիտական մտքի զարգացման հիմնական փուլերը:
44. Հայկական հեքիաթների գրառման տպագրման և հետազոտման պատմությունը:
45. Կանանց կերպարները «Սասնա ծռերում»: